

ներէն պ. Մինաս Բերբերեանը և Իւրիյ Վեսելովսկին, որոնց անունները սակայն չեն էլ յիշուած ժողովածուի մէջ: Դա արդէն ցոյց է տալիս, որ գործի գլուխ են անցած մարդիկ, որոնք այնքան էլ լուրջ չեն նայում իրանց պատասխանատուութեան վերայ: Մէկ անգամ, որ թարգմանութիւնները իսկական թարգմանութիւններ չեն — իհարկէ հարկ էլ չկայ խօսել, թէ որ աստիճանի նրանք յաջող են, մօտ են ընագրին, տալիս են հեղինակի ոգին և այլն: Բաւական է ասել որ նրանք ընդհանուր առմամբ յաջող են և կարողանում են գաղափար տալ մեր երիտասարդ հայ քնարի մասին: Զգիտե՛ք միայն, թէ ինչու ընտրեալների մէջ ընկել է և պ. Լևոն Մանուէլեանը, քանի որ նրա բանաստեղծ լինելը նոյնքան կասկածի տակ է, ինչպէս և Սրինգինը, Բալուդեանինը և այլն. և յամենայն դէպս սրանք իբրև Dii Minori կանգնած են մէկ և հաւասար աստիճանի վերայ, և հարկ չկայ Լ. Մանուէլեանին զերազասութիւն տալու: Բացի ոտանաւորներից, ժողովածուի մէջ ղետեղուած են փոքրիկ, կարճառօտ կենսագրական—գրախօսական յօդուածներ, ամեն մէկ բանաստեղծի մասին առանձին առանձին: Այդ յօդուածները կարելի էր կազմել աւելի լուրջ և աւելի մեծ խնամքով:— Չնայած այս բոլոր պակասութիւնների, մենք սիրով ողջունում ենք այս հրատարակութիւնը և ի սրտէ ցանկանում ենք նրան յաջողութիւն ուսն հասարակութեան մէջ:

ՕՐ. ՅԻՄԻ

L'hirondelle — Ծիծեռնակ. ֆրանս. թարգմ. Ն. Լալայեան. ձայնագրեց Ն. Նիկոլայև:

Դողդիսեանի հանրածանօթ «Ծիծեռնակը», որ այնքան սիրելի է հայ ժողովրդին, ֆրանսերէնի է թարգմանել և եղանակել պ. Նիկ. Լալայեանը և ձայնագրել է երաժշտապետ Ն. Նիկոլայևը: Այդ աշխատութիւնը պէտք է լոյս տեսնէր ճշմարիտ անցեալ տարուայ համարներից մէկում. բայց Թիֆլիսում անկարելի եղաւ երոպական ձայնանիշները օրինաւոր կերպով տպել: Այժմ ոչ Լալայեանը նոյն առանձին բրօշիւրով հրատարակել է Մոսկուայում: «Ծիծեռնակը» ձայնագրած է բաւական անոյշ եղանակով, ճիշտ այնպէս, ինչպէս երգւում էր 70-ական թուականներին: Պ. Լալայեանցը հին և հմուտ գրա-

գէտներէից մէկն է, որ գերմաներէնից հայերէնի է թարգմանել Հոֆմանի «Բարեկամութեան զոհեր» վէպը, ունի Ֆրանսերէն մի քանի աշխատութիւններ և աշխատակցել է տեղւոյս հայ թերթերին. ուրախ ենք, որ պարոնը դարձեալ սկսում է նուիրել իրան հայ գրականութեան:

ՀԱՅ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- Հիլլէր. Բանաստեղծ իդէալիստ. պատկերազարդ շքեղ հրատարակութիւն. գրեց ղով. փիլ. Ս. Թառայեանց. Ս. Պ. Բուրգ 1903 գինն է 3 ուրլի.
- Էլիզա Օժէշկո. Սպիտակ ծաղիկ. Նովելլա. Թարգմ. Ս. Հաճվերդեանց. Թիֆլիս 1903.
- Հիրվանդադէ Արտիստը. Թիֆլիս 1903.
- Հասրիար. Եղօյի Բոս բաղտը. Թիֆլիս 1903.
- С. Уманецъ. Современный бабизмъ (расколъ въ магометанствѣ). Изд. Г. Меликъ-Каракозова (№ 5) Тифлисъ 1904 г.
- Новое обозрѣніе за 20 лѣтъ. (1884—1903 г.). Краткій историческій обзоръ. Перечень статей печатавшихся въ „Нов. Об.“ въ 1884—1903 гг. Тифлисъ 1904.
- Ալէք. Աբէլեան. Մարուող ճրագներ. պիէս 3 զործողութեամբ. Թիֆլիզ 1904.
- Գր. Բաղ.-Աղաջանեան. Լեգենդաներ. Բագու 1904.
- Ծիծեռնակ—Lhirondele. Romance armenienne. traduite par N. Lalayantz, երաժշտ. Ն. Նիկոլայեի, Մոսկուա 1904.
- Հաջադէ և Փէրիխանում. Հէքիաթ. գրեց Ա. Փ. Թիֆլիս 1903.
- Գ. Վ. Յովսէփեան. Խոսրովիկ թարգմանիչ և երկասիրութիւնք նորին. Վաղարշապատ 1903.
- Գ. Ղազարեան. 1. Վենդանիների վարակիչ հիւանդութիւնների մասին ընդհանուր հասկացողութիւն. 2. Եղջիւրաւոր անասունների ժանտախտ. Վաղարշապատ 1904.
- Ա. Չեխով. Մարդը պատեանի մէջ. զրոյց. Թարգմ. Ա. Բարութչ. Հուշի 1904.
- Ա. Բահաթրեան. Հին հայոց տաղաչափական արուեստը, քննական տեսութիւն. Հուշի 1891
- Ն. Առակագիրք. Հուշի 1886.